ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/54

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
Բողոքաբեր՝ «Ալեքս Պրո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Ա. Ապերյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների պատրաստման աշխատանքների կատարման ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 25.07.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է չեղյալ համարել «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 25.07.2019թ. և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 02.08.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 02.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.08.2019թ.-ին:

2. **<u>«Ալեքս Պրո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Ալեքս Պրո» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի 28 հունիսի 2019 թվականին gnumner.am կայքում ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով հայտարարվել է գնանշման հարցման միջոցով ապրանքների գնման ընթացակարգ, գնման առարկա է հանդիսացել անօդաչու թռչող սարքերի մասերը, որը նույն կերպ արտացոլվել է ընթացակարգի հրավերի գնման և վճարման ժամանակացույցներում միավոր ապրանքի անվանման սունյակներում ապրանքի տեխնիկական բնութագիրը սունյակում բացվածքով, որով պատվիրատուն ցանկանում է գնել մեկ հատ անօդաչու թռչող սարքի տեսախցիկ:

«Ալեքս Պրո» ՍՊ ընկերությունը օրենքով սահմանված կարգով հայտ է ներկայացրել ընթացակարգին լիազորված անձի միջոցով, հայտ է ներկայացրել միայն մեր կազմակերպությունը հայտի գինը կազմել է 637000 (Վեց հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ, պատվիրատուի կողմից 2019 թվականի հուլիսի 1-ին հրապարակված գնումների պլանում որը պատվիրատուի վերջին փոփոխված գնումների պլանն էր ապրանքի գինը կազմել է 740000 (Յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ այսինքն մեր կողմից ներկայացված գինը ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի չի գերազանցել պատվիրատուի կողմից ապրանքի գնման համար նախատեսված ֆինանսական միջոցները, որի մասին և փաստել են նիստին ներկա երկու հանձնաժողովի անդամները և հանձնաժողովի քարտուղարը:

2019 թվականի հուլիսի 1-ին ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվեց արձանագրություն ըստ որի ընթացակարգը չկայացած է հայտարարվում հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին հետի 1-ին մասը:

Հարկ է նշել, որ պատվիրատուի կողմից կոպիտ կերպով խարտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետը:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Ալեքս Պրո» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել Պատվիրատուի կողմից Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածների խախտումները, և ղեկավարվելով նույն Օրենքի 50-րդ հոդվածով սահմանված պահանջներով խնդրել է չեղյալ համարել «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը:

3. <u>«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.07.2019թ. գրությամբ դիմել է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին՝ հնարավորություն տալով «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի կողմից 25.07.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Ներկայացված դիրքորոշմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

««Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը անօդաչու թռչող սարքերի մասերի ձեռքբերման նպատակով 2019 թվականի հունիսի 28-ին հայտարարել է «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգ:

Վերը նշված գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի արդյունքների համաձայն գնային առաջարկ է ներկայացրել «Ալեքս Պրո» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը կազմել է 637 000 ՀՀ դրամ:

Մինչդեռ վերը նշված գնման առարկայի համար սահմանված պատասխանատու ստորաբաժանման գնման հայտով գնման առարկայի մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը նախատեսված է եղել 370 000 ՀՀ դրամ, որի համար հիմք է հանդիսացել շուկայի ուսումնասիրության արդյունքները:

Հաշվի առնելով, որ ներկայացրած գինը գերազանցում է «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը, «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցին՝ «Ալեքս Պրո» ՍՊ ընկերությանը 2019 թվականի հուլիսի 8-ին ծանուցվել է բանակցությունների վարման մասին հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը: «Ալեքս Պրո» ՍՊ ընկերությանը բանակցությունների վարման նիստին 1-ին չափաբաժնով էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է նոր, ավելի ցածր գնային առաջարկ՝ 626 000 ՀՀ դրամ:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է «Ալեքս Պրո» ՍՊ ընկերության հայտը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ պարբերությունը և «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի հրավերի 7.6 կետի զ պարբերությունը, գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարել է չկայացած:

Ինչը վերաբերում է տեղեկագրում հրապարակված ՊՈԱԿ-ի 2019 գնումների պլանում, 34721510-1 CPV ծածկագրով «անօդաչու թռչող սարքերի մասեր» գնման առարկայի միավորի գինը սունյակում նշված 740 000 ՀՀ դրամ գնին և քանակը սունյակում նշված 1 քանակին, հայտնում եմ, որ դա եղել է տեխնիկական վրիպակ, քանի որ համաձայն շուկայում կատարված ուսումնասիրության նշված գնման առարկայի մեկ միավորի արժեքը հանդիսանում է 370 000 ՀՀ դրամ, ուստի պետք է նշված լիներ միավորի գինը սունյակում 370 000 ՀՀ դրամ իսկ քանակը սունյակում 2: Հարկ է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում: Գնահատող հանձնաժողովը գործել է հաշվի առնելով օրենքի վերը նշված նպատակը:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՊՈԱԿ-ը անօդաչու թռչող սարքերի մասեր ձեռքբերման նպատակով 2019 թվականի հուլիսի 23-ին հայտարարել է նոր գնման ընթացակարգ, որին հայտ ներկայացրած մասնակիցը առաջարկել է 370 000 ՀՀ դրամ:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից անօդաչու թռչող սարքերի մասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձան, գնման առարկա է հանդիսանում 1 հատ անօդաչու թռչող սարքերի մասերի ձեռքբերումը, իսկ որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 34721510-1 կոդը:

www.gnumner.am կայքում 01.07.2019թ.-ին հրապարակված «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ ԳՄԱ դասակարգման (CPV) 34721510-1 կոդով նշված անօդաչու թռչող սարքերի մասերի քանակը նշվել է 1 (մեկ) միավորի գինը՝ 740 000 ՀՀ դրամ:

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից անօդաչու թռչող սարքերի մասերի ձեռքբերման նպատակով 25.06.2019թ.-ին գնումների համակարգողին տրված թիվ 40 գնման հայտի համաձայն՝ որպես ձեռքբերվող ապրանքի քանակ նշվել է 1 հատ, միավորի գինը՝ 370 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել միայն «Ալեքս Պրո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 08.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից առաջարկվել է 637 000 ՀՀ դրամի չափով գնային առաջարկ:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որոշել է ծանուցել Ընկերությանը՝ առաջարկված գնի նվազեցման շուրջ բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Հանձնաժողովի 11.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ալեքս Պրո» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է նոր՝ 626 000 ՀՀ դրամի գնային առաջարկ:

Նույն արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով, որ Ընկերության ներկայացրած գինը գերազանցում է «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը, Հանձնաժողովը որոշել է մերժել «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և հիմք ընդունելով հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» և «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի հրավերի 7.6 կետի «զ» պարբերությունները, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Հայտերի բացման նիստում չի հրապարակվել և արձանագրվել գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի կողմից 25.07.2019թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է ամբողջությամբ բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը

հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ … :

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է.

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից անօդաչու թռչող սարքերի մասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձան, գնման առարկա է հանդիսանում 1 հատ անօդաչու թռչող

սարքերի մասերի ձեռքբերումը, իսկ որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 34721510-1 կոդը:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից անօդաչու թռչող սարքերի մասերի ձեռքբերման նպատակով 25.06.2019թ.-ին գնումների համակարգողին տրված թիվ 40 գնման հայտի համաձայն՝ որպես ձեռքբերվող ապրանքի քանակ նշվել է 1 հատ, միավորի գինը՝ 370 000 ՀՀ դրամ:

Ընկերությունը կողմից առաջարկվել է 637 000 ՀՀ դրամ գումարի չափով գնային առաջարկ, Հանձնաժողովը, բացման նիստում չհրապարակելով և չարձանագրելով գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը, որոշել է ծանուցել վերջինիս՝ առաջարկված գնի նվազեցման շուրջ բանակցությունների հրավիրելու համար:

Բանակցությունների արդյունքում «Ալեքս Պրո» ՍՊԸ-ն ներկայացրել է 626 000 ՀՀ դրամի նվազեցված գնային առաջարկ, ըստ էության իրազեկված չլինելով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների իրական՝ գնման հայտով սահմանված գնի՝ 370 000 (երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարի մասին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Հանձնաժողովն որոշել է մերժել «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այն պատճառաբանությամբ, որ Ընկերության ներկայացրած գինը գերազանցում է Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը՝ 370 000 (երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 01.07.2019թ.-ին հրապարակված գնումների պլանում և պատասխանատու ստորաբաժանման կողմից 25.06.2019թ.-ին գնումների համակարգողին տրված գնման հայտում առկա տվյալների համաձայն՝ գնման առարկա հանդիսացող անօդաչու թռչող սարքերի մասերի քանակների մեջ առկա է անհամապատասխանություն, որն էլ հանգեցրել է թյուրիմացության առաջացմանը: «Ալեքս Պրո» ՍՊԸ-ն տեղեկացված չլինելով ապրանքի նախահաշվային գնի մասին, բանակցությունների արդյունքում ներկայացրել է 626 000 ՀՀ դրամի նվազեցված գնային առաջարկ, դրանով իսկ արհեստականորեն զրկվելով բանակցությունների արդյունքում մրցակցային գնային առաջարկ ներկայացել հնարավորությունից, քանի որ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի հրապարակվել և արձանագրվել գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գինը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթները, որի արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ալեքս Պրո» ՍՊԸ-ի կողմից 25.07.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/54 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հաննաժողովին դադարեցնել 11.07.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**